

ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավոր,
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և
քաղաքականության ինստիտուտի սահմանադրական և մունիցիպալ
իրավունքի ամբիոնի ավագ դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկում է վարչարարության սահմանադրական և օրենսդրական սկզբունքների բովանդակությունը, առանձնահատկությունները և դրանց գործնական նշանակության հետ կապված հարցերը:

Հիմնաբառեր - վարչարարություն, իրավունքի սկզբունք, վարչարարության սկզբունքներ, օրինակա- նություն, համաչափություն, հայեցողական լիազորություն, անտեսվարություն:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքներով փոփոխված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը¹ ուղղակիորեն ամրագրել է վարչարարության վերաբերյալ մի շարք ելակետային սկզբունքներ, որոնք առավել կոնկրետացված և հանգամանորեն պետք է իմպլեմենտացիայի ենթարկվեն գործող «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում² և այլ օրենսդրական ակտերում:

«Վարչարարություն» հասկացության բնորոշումը ամրագրված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ կետով. «Վարչարարություն՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունը, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ»:

«Վարչարարություն» եզրույթը վարչական իրավունքի տեսության մեջ երբեմն օգտագործվում է ավելի լայն իմաստով. վերջինիս տակ նկատի է առնվում գործադիր իշխանություն իրականացնելիս վարչական մարմնի կամ գործադիր իշխանության իրականացնելու դեպքում ցանկացած այլ պետական մարմնի նաև այնպիսի գործունեություն, որն ուղղված է նաև ներքին համակարգային խնդիրների լուծմանը³:

Վարչարարությունն իրականացվում է մի շարք ելակետային սկզբունքների հիման վրա, որոնք ամրագրված են, ինչպես նշեցինք, ՀՀ Սահմանադրությունում և «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում:

Վարչարարության հիմնական սկզբունքներն իրենց էությանը սահմանադրական անմիջական գործող ելակետային դրույթներ են, որոնք, ամրագրվելով վարչական մարմինների համար, ստացել են

նաև վարչական իրավունքի սկզբունքների բնույթ: Բոլոր այդ սկզբունքների ամրագրման նպատակը մեկն է՝ ապահովել իրավական պետության գաղափարների, դրանց դրսևորումների իրացումը վարչական իրավունքում:

Դա նշանակում է, մասնավորապես, նաև վարչական մարմինների կապակցվածություն մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով, վարչական մարմինների գործունեության օրինակա- նություն, դրանց որոշումներից պաշտպանվելու բավարար երաշխիքներ, ինչպես վարչական մարմինների համակարգում, այնպես էլ դատարաններում, կամայականության արգելք, վարչարարության համաչափություն: Այստեղից պարզորոշ է դառնում, որ ՀՀ Սահմանադրությունում և Օրենքում ամրագրված այս կարևորագույն սկզբունքներն իրենց «տեղում» են և իրենք էլ կանխորոշում և արտացոլվում են հատկապես վարչական վարույթի սկզբունքներում, որոնք պակաս կարևոր չեն արդեն իսկ վարչական վարույթի շրջանակներում, ասենք, օրինականությունն ապահովելու համար: Քանի որ գործնականում անձի և վարչական մարմնի շփումների առանցքում կոնկրետ հարցերին լուծում տալն է, իսկ դա հնարավոր է անհատական (վարչական) ակտերի միջոցով, ապա ակնհայտ է, որ վարչական վարույթի սկզբունքների դերը գործնականում դժվար է թերագնահատել:

Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ սահմանադրական դրույթների վերացական և շատ հակիրճ բովանդակությունը որոշակիացնող ու մանրամասնող դրույթները չէին կարող չկրել «հիմնարար» անվանումը: Բացի դրանից, այդ բնորոշումն ի հայտ է բերում փաստը, որ Հայաստանում Սահմանադրության և օրենքի մակարդակով առաջին անգամ են կոդիֆիկացիայի ենթարկվում ընդհանուր վարչական իրավունքի ակունքները:

Վարչարարության հիմնարար սկզբունքներից է օրինականության սկզբունքը⁴, որը, ըստ էության,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նշանակում է, որ վարչական մարմիններն իրենց գործունեությունում ազատ չեն, այլ կապակցված են իրավունքով և մարդու իրավունքներով⁵: Այդ կապը դրսևորվում է երկու ձևով՝ իրավունքի գերակայությանը և օրենքի վերապահմամբ:

Օրինականության սկզբունքը փոփոխված ՀՀ Սահմանադրության հիմնարար սկզբունքներից է, որն ամրագրված է 6-րդ հոդվածում. «1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրականությամբ կամ օրենքով:

2. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

3. Օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո»:

Այսպիսով, օրինականության սկզբունքը հավասարապես դրսևորվում է վարչարարության հարաբերություններում Սահմանադրության, օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի կիրառման (իրացման) գործընթացում, վարչարարության կողմերի հավասարությունը իրավունքի առջև:

Սակայն իրավունքի տեսությունը առաջադրում է օրինականության սկզբունքի առավել ընդգրկուն բովանդակություն, մասնավորապես օրինականության սկզբունքը մեկնաբանվում է որպես նվազագույն հետևյալ տարրերի միաժամանակյա ամբողջություն՝

- ա) իրավունքի գերակայության սկզբունքին և բացառապես ժողովրդավարության չափանիշներին համահունչ օրենսդրության առկայություն,
- բ) հիշյալ բնույթի օրենսդրության կատարման պահանջ,
- գ) օրենսդրության պահանջների կատարման իրավական և կազմակերպչական երաշխիքների առկայություն⁶:

Այլ կերպ ասած, օրինականության սկզբունքի ներքին բովանդակությունը հիմնված է ոչ այնքան օրենքի գերակայության, ինչպես երբեմն սխալմամբ ներկայացվում է, այլ իրավունքի գերակայության վրա: Այլ կերպ ասած, առանց իրավունքի գերակայության, օրենքի գերակայությունը ոչ միայն կդառնա ինքնանպատակ, այլև կհակասի Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության գաղափարին:

Վարչարարության հիմնարար սկզբունքներից է ձևական պահանջները չարաչափելու արգելքի սկզբունքը:

Ձևական պահանջների չարաչափումը վարչական մարմինների «բյուրոկրատական մոտեցման» ամենավառ և թերևս ամենահաճախ հանդիպող դրսևորումներից է: Դա այն երևույթներից մեկն է, որն էապես նպաստում է անձանց և վարչական մարմինների միջև փոխադարձ անվստահության մթնոլորտի ստեղծմանը և իշխանությունից հանրության «օտարացմանը», չնայած որ այդ դրսևորումները հասուկ են ոչ միայն վարչական մարմիններին:

Ձևական պահանջները չարաչափելու արգելքի սկզբունքը զգալի գործնական նշանակություն ունի, քանի որ վարչարարության պրակտիկայում ձևական պահանջների պահպանման պատրվակով հաճախ են ստեղծվում բյուրոկրատական անհարկի քաշքշուկներ: Որպես կանոն, դրանք ուղեկցվում են կոռուպցիոն ռիսկերով, քանզի անհարկի ձգձգումներով հաճախ պաշտոնյաները կաշառելու ակնարկ են անում:

Միաժամանակ այս սկզբունքը, հեղինակի կարծիքով, անհրաժեշտ խորությամբ բացահայտված չէ, քանզի դեռևս տրված չէ այնպիսի հասկացությունների մեկնաբանությունը, ինչպիսիք են «ձևական պահանջները», «պարտականությունները բովանդակային առումով կատարված լինելը» և այլն: Ընդ որում, խոսքը Օրենքի 5-րդ հոդվածով ամրագրված դրույթների մասին է. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմինն արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Իհարկե, վարչարարության գործընթացում ձևական, ընթացակարգային նախապայմաններն անհրաժեշտ են, սակայն դրանց կիրառումը չպետք է ինքնանպատակ լինի: Վարչական մարմինը չպետք է խստորեն հետևի ձևին, եթե դա արդարացված չէ գործի հանգամանքներով և անթույլատրելի կերպով բարդացնում է իր իրավունքներն իրականացնելու անձի հնարավորությունները:

Վարչարարության կարևոր սկզբունքներից է հայեցողական լիազորությունները սահմանափակելու սկզբունքը: Օրենսդիրն իրավակիրառին հաճախ իրավունք է վերապահում, ելնելով կոնկրետ հանգամանքներից, ընդունել հնարավոր մի քանի իրավաչափ որոշումներից որևէ մեկը՝ դրանց ընտրությունը թողնելով վարչական մարմնի հայեցողությանը (տե՛ս Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը):

Նույն հոդվածի հաջորդ մասով օրենսդիրն ար-

www.journal.lawinstitute.am

դեն ամրագրում է այն շրջանակները, որոնք սահմանափակում են հայեցողական լիազորությունները. «Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ»:

Սակայն վարչական մարմինների հայեցողական լիազորությունները բնավ էլ չի կարելի դիտարկել որպես կամայականության հիմք և հայեցողությունը հասկանալ որպես վարչական մարմնի բացարձակ ազատություն: Այս սկզբունքի բացակայության պարագայում վարչական մարմինը կարող էր գործել կամայականորեն և ինքը որոշել իր գործելու սահմաններն ու նպատակը, որն անթույլատրելի է իրավական և ժողովրդավարական պետության ձևավորման համար:

Վարչական մարմնի հայեցողական լիազորությունը, որպես կանոն, ինքնին կամայականություն չէ, դեռ ավելին, հայեցողությունը վարչական մարմնին հնարավորություն է տալիս իր լիազորության սահմաններում գործելու առավել ճկուն և ստեղծագործական ոճով, բացահայտելու պաշտոնյաների մասնագիտական գիտելիքները և գործնական հմտությունները, խթանելու պատասխանատվությունը վերջնական որոշումներ ընդունելու գործընթացում:

Հայեցողությունը կարող է վերածվել ամենաթողության և կամայականության, եթե չարաշահվում է օրենքով վերապահված լիազորությունները վարչական մարմնի կողմից:

Վերոնշյալ սկզբունքը փոխկապվածության մեջ է կամայականության արգելքի սկզբունքի հետ:

Կամայականության արգելքի սկզբունքը նշանակում է, որ վարչական մարմիններին արգելվում է տարբերակված (անհավասար) մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Եվ, ընդհակառակը, նրանք պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել իրարից էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ (տե՛ս Օրենքի 7-րդ հոդվածը):

Կամայականության արգելքի սկզբունքը պարտավորեցնում է հայեցողական լիազորություն իրականացնել միայն այն ձևով, ինչ ձևով այն արդեն իսկ իրականացվել է նախկինում միանման դեպքերում, այսինքն՝ նախապատվությունը տրվում է միանման դեպքերում միատեսակ ձևով լիազորություն իրականացնելուն, ինչը իրավահավասարության կարևորա-

գույն իրավական երաշխիք է: Անընդունելի է և իրավաչափ չէ այնպիսի վարչարարությունը, որի դեպքում հայեցողական (և ոչ միայն) լիազորությունը բացահայտ իրականացվում է խիստ ընտրանքային սկզբունքով՝ կախված կոնկրետ անձի ինքնությունից:

Այլ խոսքով, էապես նմանին պետք է վերաբերվել միևնույն ձևով, իսկ էապես տարբերվողի հանդեպ անհրաժեշտ է ցուցաբերել այդ տարբերությունները հաշվի առնող (անհատական) մոտեցում:

Նշված կանոնից թույլատրվում է միայն մեկ բացառություն. «Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում» (Օրենքի 7-րդ հոդված):

Այս սկզբունքի գործնական կարևորությունը արտահայտվում է վարչական մարմինների կողմից հայեցողական լիազորություններ իրականացնելիս:

Վարչարարության հաջորդ կարևոր սկզբունքն է համաչափության սկզբունքը, որը սահմանադրական փոփոխությունների արդյունքում վերածվել է սահմանադրական սկզբունքի. «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը» (Սահմանադրության 78-րդ հոդված):

Այդ սկզբունքը մինչ սահմանադրական փոփոխությունները ամրագրված է եղել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում, ըստ որի՝ «Վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր»:

Համաչափության սկզբունքը բաղկացած է երեք տարրերից. դրանք են՝ պիտանիություն, անհրաժեշտություն և չափավորություն: Սահմանադրական և օրենսդրական պահանջը, համաձայն որի՝ վարչական մարմնի կողմից Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին հասնելու համար գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, նշանակում է, որ վարչական մարմնի հայեցողությանը վերապահված մի քանի միջոցներից վարչական մարմինը պետք է ընտրի այն միջոցը, որով կարող է հասնել այդ նպատակին: Եթե պիտանի միջոցները մեկից ավելի են, ապա դրանցից պետք է ընտրվի տվ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յալ նպատակին հասնելու համար անհրաժեշտը, իսկ պիտանի և անհրաժեշտ միջոցներից՝ այն միջոցը, որն առավել նվազ ձևով միջամտելու է անձի իրավունքներին, այդուհանդերձ, թույլ է տալիս հասնել հետապնդվող նպատակին:

Վարչարարության համաչափության սկզբունքի շրջանակներում գործելը կարող է վկայել ինչպես բարձր մասնագիտական պատրաստվածության, այնպես էլ վարչական մարմինների համակարգում անհրաժեշտ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայության մասին⁷:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքն ամրագրել է նաև առավելագույնի սկզբունքը: Նշված սկզբունքը փոխկապակցված է վարչարարության բոլոր սկզբունքների հետ և կազմում է միասնական համակարգ, սակայն վերջինիս կապը սերտ է հատկապես ձևական պահանջները չարաշահելու արգելքի հետ: Օրենսդրության այդ սկզբունքը ամրագրված է հետևյալ կերպ.

«1. Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում:

2. Եթե անձանց կողմից վարչական մարմիններին ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջել լրացուցիչ կամ առանձնացված ձևով:

3. Եթե վարչական մարմինների կողմից անձանց տրված թույլտվությունները բովանդակային առումով ներառում են այլ թույլտվություններ, ապա դրանք նույնպես համարվում են տրված» (Օրենքի 9-րդ հոդված):

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ իրականում խոսքը դեռևս հին հռոմեական իրավունքին հայտնի «a majore ad minus» («առավելագույնը ներառում է նվազագույնը») սկզբունքի մասին է, որը մեր ժամանակներում դիտարկվում է որպես իրավունքի ընդհանուր սկզբունք անկախ դրա օրենսդրական ձևակերպումից: Այս սկզբունքը կոչված է անձին երաշխավորել, որ վարչական մարմինն իրենից չի պահանջի կատարել որոշակի գործողություններ, եթե դրանք իրենց ծավալով ընդգրկված են արդեն իսկ կատարված գործողությունների մեջ⁸:

Վարչարարության գործնական տեսանկյունից հատկապես առանձնանում է հավաստության կանխավարկածի սկզբունքը, որը փոխկապված է վերոնշյալ բոլոր սկզբունքների, հատկապես՝ ձևական պահանջները չարաշահելու արգելքի և կամայական

նության արգելքի սկզբունքների հետ:

Օրենքում սահմանվում է, որ «վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել», և որ «արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ» (Օրենքի 10-րդ հոդված):

Հավաստիության սկզբունքի համաձայն՝ անձի կողմից ներկայացված վարչարարությանն առնչվող ցանկացած տվյալ բոլոր դեպքերում համարվում է հավաստի, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Վարչական մարմինը չի կարող ներկայացված տվյալների հավաստիությունը պարզելու համար պահանջել այնպիսի փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, որոնք նախատեսված չեն օրենքով: Հիմնավոր կասկածի դեպքում վարչական մարմինն ինքն է պարտավոր իր միջոցներով ինքնուրույն միջոցներ ձեռնարկել տվյալների հավաստիությունը պարզելու համար:

Հավաստիության կանխավարկածի նպատակը վարչական մարմինների և անձանց միջև փոխվստահության ձևավորումն է, բացի այդ, նրանց միջև հավասարության ամրապնդումը: Վարչական մարմնի տված փաստաթղթին պետք է վստահել նույնչափ, որքան և անձի պնդումներին: Միևնույն ժամանակ, այնպես, ինչպես վարչական մարմնի պաշտոնատար անձն է ենթակա պատասխանատվության փաստաթղթեր կեղծելու կամ նմանատիպ այլ չարաշահումների համար, որոնք խաթարում են հասարակության վստահությունը այդ մարմնի հանդեպ, այնպես էլ անձն է ենթակա պատասխանատվության վարչական մարմնին կեղծ տեղեկություններ ներկայացնելու համար:

Վարչարարության ոլորտում ոչ պակաս նշանակություն ունի տնտեսվարության սկզբունքը, քանի որ վարչական մարմինների գործունեությունը ֆինանսավորվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարած հարկերից, տուրքերից և այլ պարտադիր վճարներից, որը վարչարարության խնայողաբար և արդյունավետ իրականացման հարցում արդարացնում է հասարակության շահագրգռվածությունը:

Տնտեսավարության սկզբունքը¹⁰ փոխլրացնում է վարչարարության համաչափության սկզբունքին. «Վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարեն-

www.journal.lawinstitute.am

պաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը» (Օրենքի 11-րդ հոդված):

Այս սկզբունքը ունի գործնական մեծ նշանակություն նաև վարչարարության արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Անփոփելով՝ նշենք, որ վարչարարության սահ-

մանադրական և օրենսդրական սկզբունքները կարևոր երաշխիքներ են վարչարարության ոլորտում օրինականության ապահովման և մարդու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Երևան, 2015 (այսուհետ՝ հոդվածները՝ տեքստում):

² Տե՛ս ՀՀ ՊՏ N 18 (317), 31.03.04 (հետագա փոփոխություններով): Երևան, 2015:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ: Ընդ. խմբ. իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ. Դանիելյանի: Երևան, 2012, էջ 365:

⁴ Տե՛ս Актуальные проблемы административного права и процесса. Учебник/ М.В. Костенников, А.В.Куракин, А.М. Кононов, П.И. Кононов, А.И. Стахов, Н. Д. Эриашвили М., 2015, С. 326-341.

⁵ Տե՛ս Панова И.В. Актуальные проблемы административного процесса в Российской Федерации. Дис...д-ра юрид. наук. Екатеринбург, 2000, с. 114-115

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ: Ընդ. խմբ. իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ. Դանիելյանի: Երևան, 2012, էջ 368: Տե՛ս նաև՝ Теткин Д.В. Законность как реальное выражение права. Дис...канд. юрид. Наук. Тамбов, 2007, с. 100-101.

⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք, էջ 373:

⁸ Տե՛ս նաև Панова И.В. Актуальные проблемы административного процесса в Российской Федерации. Дис... д-ра юрид. Наук.Екатеринбург, 2000, с. 123

⁹ Տե՛ս նույն տեղը էջ 120-121:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 123:

Рафик Хандянян

Судья административного суда РА,

Старший преподаватель кафедры конституционного и муниципального права Российско-Армянского (Славянского) университета, кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Принципы административирования

В данной статье автор обстоятельно рассматривает конституционные и законодательные принципы административирования, их особенности и практические проблемы.

Ключевые слова: административирование, принцип права, принципы административирования, законность, соразмерность, дискреционная полномочия, хозяйствование.

Rafik Khandanyan

Judge of the Administrative Court of the Republic of Armenia,

Professor of the department of “constitutional right,

municipal right” of Russian-Armenian (Slavonic) university,

PhD in law

SUMMARY

The principles of administrative action

In this article the author thoroughly discusses the content and features of constitutional and legislative principles of administrative action, as well as issues related to their practical significance.

Keywords: administrative action, principle of law, principles of administrative action, legality, proportionality, discretionary power, efficiency.